ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/321 «21» 10 2025 թ.

<<ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ>> ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Մնացականյանին
(ՀՎՀՀ 01063649)
Հասցե՝ Ք.Երևան, Ավան, Մ. Բաբաջանյան փ. 39/313 շենք
Էլ. հասցե՝ anush-mnacakanyan@mail.ru
Հեռ.՝ +37493959150

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջև 02.04.2025թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–ՓԾ/2025/L-44-1 ծածկագրով պայմանագրի, ինչպես նաև 26.05.2025թ. կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 450 հատ հատուկ հանդերձանք և պարագաներ /ամենօրյա համազգեստ INSARAG/, սակայն մինչ օրս ապրանքները չեն մատակարարվել:

24.09.2025թ. թիվ 15/12/260095-25 գրությամբ <<ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ>> ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետների խախտման մասին:

<<ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ>> ՍՊԸ-ի կողմից մինչ օրս չի մատակարարվել ապրանքատեսակը և չի կատարվել պայմանագրային պարտականությունները, խախտվել է Պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով

սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ՆԳՆ և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–ՓԾ/2025/L-44-1 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 23 625 (քսաներեք հազար վեց հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ և սահմանված տույժը յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով՝ 32 աշխատանքային օրերի նկատմամբ, որը կազմում է 26 376 (քսանվեց հազար երեք հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 945 000 /ինը հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 630 000 /վեց հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

« 21 » 10 2025թ.

ք.Երևան

Գնումների համակարգման բաժին
Կապ.՝ Լ. Սահակյան
Հեռ. /010/ 59 60 21